**Պատասխաններ**

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի մարզային փուլի – 2023-2024 ուս. տարի

**9 – րդ դասարան**

**1.** ա-սխալ; բ-ճիշտ; գ-ճիշտ; դ-ճիշտ; ե-ճիշտ; զ-սխալ; է-ճիշտ; ը-սխալ (**յուր.՝ 0.25միավոր**)

**2.** ա (**1 միավոր**)

**3.** Մոլդովա կամ Մոլդովայի հանրապետություն (**1 միավոր**)

**4.** Գծագիրը պետք է ունենա այսպիսի կամ նմանատիպ տեսք: Բովանդակային ցանկացած սխալի դեպքում գծագրի համար **միավոր չի տրվում**: Զուտ տեխնիկական թերացումների պարագայում կարող է տրվել առավելագույնը **0.5միավոր:**




**ա** – հյուսիսահայաց (հյուսիս-արևելք պատասխանի դեպքում շնորհել 0.5միավոր)

**բ**. – 140 օր

**5. ա.** Գետի ծախսը՝ Q = S x V: Մակերեսը՝ S = 30մ x 0.5մ = 15մ$^2$:

Հետևաբար արագությունը՝ V = 12մ$^3$/վրկ : 15մ$^2$ = 0.8մ/վրկ (**0.5միավոր**):

Գետի նոր ծախսը՝ $Q_{նոր}$ = 40մ x 1մ x 0.8մ/վրկ = 32մ$^3$/վրկ (**0.5միավոր**):

**բ.** Երբ բնակչության թիվը 10մլն մարդ էր, գյուղաբնակ էր 3մլն մարդ: 10 տարի անց գյուղաբնակ էր՝ 10.5մլն x 20%/100% =2.1մլն մարդ (եթե միայն այսքանն է հաշվարկված՝ **0.5միավոր**): Հետևաբար անկումը կազմել է 3-2.1 = 0.9մլն մարդ:

**6.** Ճիշտ պատասխան ընդունել հետևյալ հոսանքներից ցանկացած չորսը՝ Հարավպասատային, Հնդկական կամ հարավարևմտյան մուսսոնային, Բրազիլական, Մոզամբիկի, Ասեղի, Արևելաավստրալական, Էլ-Նինյո: Եթե աշակերտը նշել է չորսից ավելի պատասխան, ցանկացած սխալ պատասխանի դեպքում ընդհանուր միավորը նվազեցնել 0.25միավորով:

**7. ա.** Բոդեն, Տիտիկակա, Պոոպո, Արալյան

**բ.** Հնդկաստան, Չինաստան, ՌԴ, Կանադա

Երկու դեպքում էլ իր դիրքում ճիշտ նշված պատասխանի համար աշակերտին շնորհել **0.25միավոր**

**8. ա.** Լեռների դիրքադրությամբ պայմանավորված՝ հյուսիս-արևելքը ստանում է ավելի շատ խոնավություն և անտառների աճը հնարավոր է դառնում ավելի ցածր նիշերում:

**բ.** Ֆանդի ծոցն աչքի է ընկնում աշխարհում ամենաբարձր մակընթացային ալիքներով, որոնք էլ գետերի ջրի հակառակ ուղղությամբ հոսքի պատճառ են դառնում:

**9. ա.** հարաբերական աճը 2021թ.-ին է եղել առավելագույնը՝ մոտ 97% (**յուր. 0.25միավոր**)

**բ.** Չինաստան (**0.5միավոր**)

**գ.** Վառելիքով աշխատող մեքենաների նկատմամբ առավելություններից են օրինակ՝ մթնոլորտի վրա բացասական ազդեցության կրճատումը, վառելիք չօգտագործելուց ձևավորվող խնայողությունը, սպասարկման սահմանափակ կարիքը: (**յուր. ճիշտ պատասխան՝ 0.5, ընդհանուր՝ 1միավոր**)

**10. ա.** ուղղահայաց բարձրացում (**0.5միավոր**); պատճառը վերջին սառցապատման նահանջն է, որը զգալի ճնշում էր գործադրում երկրակեղևի վրա (**0.5միավոր**): Բովանդակորեն մոտ, սակայն թերի պատասխանի դեպքում շնորհել 0.25միավոր

**բ.** Անասնապահությունը (**0.5միավոր**), քանի որ Եթովպիան լեռնային, աղքատ երկիր է, աչքի է ընկնում բավական չորային կլիմայական պայմաններով և ջրային ռեսուրսների սակավությամբ, բուսաբուծության զարգացմանը խոչընդոտող գործոններից են ռելիեֆի մասնատվածությունը, ոռոգման ջրի և ենթակառուցվածքների անբավարարությունը, պարարտանյութերի սակավությունը և տեխնիկայի ցածր ներդրվածությունը: Նման պարագայում ավանդական անասնապահության դերը էլ ավելի է մեծանում (**0.5միավոր**): Ճիշտ համարել նաև համանման բացատրությունները:

**11.** Ա-4; Բ-5; Գ-2; Դ-3 (**յուր. 0.5միավոր**)